№ 142 ՆՐԵՔՇԱԲԹԻ, 28 ՅՈՒՆԻՍԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . . 10 ռուբ.
Կէս տարին . . . . 6 ռուբ.
Ամսական . . . . 1 ռուբ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . . 12 ռուբ.
Կէս տարին . . . . 7 ռուբ.

Բաժանորդագրութիւնը ընդունւում է իւրաքանչիւր ամսի սկզբից, և պէտք վերջանայ անպատճառ յետագայ որևէ ամսի վերջին։
Ցուլիսի մէկից մինչև տարւայ վերջը արժէ 6 ռուբլի։
ՆԱՄԱԿՆԵՐ, ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐ. և ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹ. ՉԷ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ
Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 20 ԿՈՊԷԿ (կարելի է և դրոշմանիշով) և հին հասցէն, առանց որի դիմումները կը մնան ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Մեծադիր տարի 1916 Մեծադիր տարի

ՀՈՐԻԶՈՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՆՐԵՔՇԱԲԹԻ, 28 ՅՈՒՆԻՍԻ № 142

ԱՌԱՆՁԻՆ №-Ը ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ԼԵԶՒՈՎ.—1-ին երեսի վրայ տողին (պետիտ) 15 կոպ., Կովկասից դուրս՝ 30 կոպ., 4-րդ երես 10 կոպ., Կովկասից դուրս՝ 15 կոպ.
ԱԶԳԱՅԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՁՐԻ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ

Խմբագրութիւնը բաց է 8—2 ժամ., գրասենեակը 9—3 ժ. ցերեկ. և 6—8 ժ. երեկ.
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԽՄԲԱԳՐԻ ՄՕՏ՝ ժ. 2-ից մինչև 3-ը։

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція Газеты „Оризонъ", Солохакская ул., № 6, кв. 1, Телеф. № 15—57.
կամ Tiflis (Russie, Caucase). Rédaction „Horizon".

ՕՐՒԱՅ ԿԱՐԵՒՈՐ ԱՆՑՔԵՐԸ

Ռուսաց արևմտեան ճակատի հարաւային մասում կռիւները շարունակւում են ռուսների համար խոշոր աջողութիւններով։ Թշնամին նահանջում է։ Գրաւած են նոր կազմակերպութիւնը։ վերցւած են նոր հազարաւոր գերիներ, թնդանօթներ, գնդացիրներ և ռազմական ուրիշ աւարներ։

Կովկասեան ճակատում ռուսաց զօրքերը նորից առաջ են անցել Բաբերդի ուղղութեամբ։ Երզրումից դէպի արևմուտք գրաւած են թիւրքական մի շարք դիրքեր, վերցւած են խոշոր թւով գերիներ, որոնց թւում երկու գնդապետ, խլւած է 7 գնդացիր, 1 թնդանօթ և շատ զէնք ու ռազմամթերք։

Սև-ծովում թշնամու սուզանաւը խորտակել է ռուսաց «Впередъ» հիւանդանոցային նաւը։ Ջրահեղձ են եղել 7 հոգի, մնացածները ազատւած են։

Ֆրանսիական ճակատում անգլօ-ֆրանսիացիները, չնայելով թշնամու յամառ դիմադրութեան, շարունակւում են առաջ անցնել։ Գրոհով վերցւած են մի քանի ամուր դիրքեր։ Նորից խոշոր թւով գերիներ են վերցւած։ Վերջին օրերս անգլիացիները խլել են 20 թնդանօթ, 51 գնդացիր և ահագին քանակութեամբ զէնքեր ու ռազմական նիւթեր։ Վերդէնի մօտ տեղի են ունենում թնդանօթաձգութիւն։

Իտալական ճակատում իտալացիները շարունակում են առաջ անցնել։ Վերցւած են կարևոր դիրքեր և գերիներ։

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Հայ լեզուն

IV

Մենք ունեցել ենք հայեր Լեհաստանում և Հնդկաստանում, որոնց հետքն անգամ այսօր չկայ։ Նրանք ձուլւել են ազգութեամբ, ձուլւել են կրօնով ու լեզուով տեղական ցեղերի մէջ։ Եւ ենթէ հնար ունենային գոնէ լեզւի կապը պահպանելու՝ կարծում ենք այդպէս արագ չէին անհետանայ։

Ունինք այսօր հայեր հենց մեր կողքին՝ Վրաստանի Գորիում, Թելաւում, Ախալքալաքում, որոնք հայերէնը մոռացել են և խօսում են վրացերէն։ Նրանց լեզւի հետ հարկաւ մոռացւած է հայկական ամեն ինչ. և նրանց հայութեան դրօշը մնացել են եկեղեցին ու շատ քիչ տեղ՝ դպրոցը։ Մնացած սովորութիւնները, նիստ ու կացը բոլորը վրացական են։ Այդ հայերն են, որոնք այսօր նոր են զգում հայութեան ցաւը և «Հորիզոնում» բողոք են յայտնում, թէ իրենց մնացել են անտեղեակ հայկական կեանքի անցուդարձին—ներկայ պատմական մեծ աղէտին, որովհետև ոչ մի լեզու չգիտեն բացի վրացերէնից և խնդրում են վիրաբարբառ մի թերթ հրատարակել ու իրենց իրազեկ դարձնել այդ թերթի միջոցով հայկական կեանքին։

Արդեօք սա չէ՞ յիշեցնում մեզ Լեհաստանի հայերին, որոնք Նիկոլ Թորոսովիչների դաւերով կուլ գնալու ճգնաժամին դիմում էին Էջմիածին և փրկութիւն հարցում։ Բայց ձայն մընացին...

Ունինք այսօր և մեր մէջ, մեր քթի տակ, հայկական շրջաններում, բայց թուրքերով շրջապատւած ու թրքախօս դառած հայեր, որոնք վաղուց մոռացած են հայոց լեզու և հայկական նիւրական շատ սովորութիւններ։ Այդ հայերի մեծ մասը բնակւում են Նուխու գաւառում և Զիւանշիրում և կազմում են մօտաւորապէս 7—10 գիւղ։ Այդպիսի գիւղեր, մինչև երկիրն ռուսաց տիրապետութեան տակ ընկնելը ձուլւել են թուրքերի հետ։ Դրանցից մէկը մեզ յիշեցնում է մեր հանապարհորդութիւնը Նուխում, տարիներ սրանից առաջ, ուր հայութեան բեկորները դեռ կենդանի էին և յիշատակարանները կանգուն։ Դա հենց իրեն՝ Նուխու քաղաքին կպած Քիշ գիւղն էր իր մէջի եկեղեցով, որ այսօր մի հնչակաւոր ուխտատեղի է Նուխեցիների համար, և իր ծերունիներով, որոնք յիշում էին իրենց հայրերին իբրև հայերի և իրենց անւանում էին Կարապետ-օղլի, Սարգիս-օղլի, Վարդան-օղլի են։

Այսօր մեր բուրժուա ընտանիքը մեծ-մեծ քաղաքներում—որչէն այդ կամաւոր խաղի ռեճդոս վերելքն և կաթարում։ Նա գնում է...

Եթէ փորձէք նրա հայախօս որդու հետ երկու բառ խօսել՝ կը տեսնէք, որ նա կամ համր է կտրւում ու կանգնում լուռ ձեր առաջ, կամ խօսում է հայերէն այնպէս, ինչպէս այդ ողորմելի լեզուն խօսել ցանկացող մի ռուս—Արտասանութիւնն աղաւաղւած, ռըճ րը հնչելիս, ճրճ՝ կր, ճրճ՝ ա կամ գը, իսկ խօսքերն անհասկանալի ու անիմաստ, օրինակ՝—ես գիտում եմ չեմ... կինացել ա սարը կամիցցի (ուզում է ասել՝ գնացել է սարը քամի ծծի)...

Խօսացրէք հապա աւտրախոնցի հային.—Вдругъ посмотрѣлъ и увидѣлъ, որ նա тайкомъ подходитъ դէպի ինձ...

Խօսացրէք մեր օրհնեալ Ղարաբաղի ուէալիստին, որի հայրենիքը իրր պարծենում է իր շատ նահապետականութեամբ.—ա՛ դա, ни знаешь, է, էդպէս բան я никогда не видѣлъ...

Երեւակայեցէք, թէ ինչ քայլերով ու աղաւաղման ինչ պրոցեսով է նետւում Ամերիկայի և Ֆերզանի հայը տեղական տիրող լեզուների ծանդաստանը։

Ասացէք, խօսեցէք, գրեցէք, յանդիմանեցէք—չէք տեսնի ձեր աչքի դիմաց մէկին ուղղելիս։ Չէք տեսնի երկու դպրոցական տղայ թէ ողջիկ իրար հետ հայերէն խօսելիս։ Հետևեցէք փողոցում, լսեցէք—թատրոնում, ակմնջ դրէք եկեղեցում—ամեն տեղ նոյնը. նոյն ռուսերէնը նրանց լեզւի վրայ։

Գնացէք հապա երկու հրէայի մօտ, պատահեցէք մի տեղ երկու լեհացու. ձեզ հետ կը խօսեն, ձեզ կը պատասխանեն ռուսերէն. իսկ փորձեցէք ականջ դնել նրանց իրար հետ խօսելիս, թէկուզ նոյն ձեզ հետ խօսած նիւթի մասին—մի բառ չէք գտնի ռուսերէն...

Ձեր հարևան թուրքն անգամ, որ գիտէք շատ լաւ հասկանում է ու խօսում հայերէն՝ ձեզ հետ խօսած ժամանակը թուրքերէն կը խօսի. և վայ է, թէ դուք փորձէք նրա հետ հայերէն սկսել ձեր խօսակցութիւնը՝ կը վիրաւորւի անպատճառ, անպատւութիւն համարելով այդ իրեն համար։

Հարկ կայ այլ ևս երկարելու, թէ մեր լեզուն ինքնամոռացման և ինքնաօտարացման ինչ շրջանն է ապրում։

Բայց հերիք է...

Ես կառաջարկէի դրա փրկութեան մի միջոց։ Այդ միջոցը սէրն է, որ մենք սիրենք մեր լեզուն, սիրենք մեր անձի պէս՝ իբրև նրա մի անբաժան մասնիկ։ Սիրենք տանը, սիրենք դպրոցում, սիրենք ճանապարհին մեր ծնողի, ծանօթի, ընկերի մօտ և խօսենք բոլոր ճայերի հետ անխտիր մեր լեզուն։

Լեզուն սիրելու համար նրան պէտք են ուժեղ գործօններ։ Այդ գործօններն են հայ դպրոցը, հայ թատրոնը, հայ գիրքը, հայ լրագիրը և հայի խորը գիտակցութիւնն ու դրանց հետ անբաժանելիօրէն կապւած սէրը։

Հայ ծնողը, հայ տղան ու աղջիկը չպէտք է ասեն, թէ մենք հայերէն չենք հասկանում, թէ հայոց լեզւի դարն անցել է. այլ պէտք է ասեն, որ ամեն անցած դար ունի նաև իր նորօգոյն դարագլուխը, իր վերածնութեան շրջանը և... պէտք է խօսեն՝ թէկուզ աղաւաղւած հայերէնով, պէտք է կարդան՝ թէկուզ կարդացածը չհասկացած, մինչև որ վարժւեն, ըմբռնեն ու սիրեն։

Հայ մեկենասները, հայ ընկերութիւնները, հայ բարերարները իրենց բարեգործութիւնների մէջ լեզւի խնդրին պէտք է լուրջ, առաջնակարգ տեղ տան և ընտրեն միջոցներից կարևորագոյնը, թէ ո՞րն է առաւել արագ օգնութեան հասնողը մեր մեռնող լեզւին, արդեօք դպրոցը, թատրոնը, գրականութիւնը, տանու երէցը, քարոզիչը, թէ՞ մի այլ առաւել ցանկալի միջոց։

Հայ գրքի հրատարակիչները չպէտք է բաւականանան իրենց ներկայացրած ձեռագիրներից ինչը մերժելու և տասներորդը տպագրելու ու դարակներում դարսելու և փոշու քաժին դարձնելու. այլ պէտք է հրատարակեն թւով աւելի շատ և գնահատութեամբ աւելի էժան գրքեր, ընթերցողին հետաքրքրող, դիւրամատչելի բովանդակութեամբ, առաւել վիպական զրուցներ ու պատմական զրւագներ մեր կեանքից, և օրչիկ զրավաճառների միջոցով տարածեն ժողովրդի մէջ՝ քաղաքից քաղաք, գիւղից գիւղ, տնից տուն։

Պէտք է առաւել լուրջ վերաբերմունք մեր կենտրոնական քաղաքների այն հայերի վերաբերմամբ, որոնց երկու քայլից մէկը օտարացման գիրկն է շտապում, խօսք մեւսը ճայկականութիւնից իր հրաժեշտն է ուզում տալ և դաւառահայի համար ազատ ճանապարհ բանալ...

Պէտք է այս ամենը և շատ բան, որ ասենք, թէ իսկապէս սիրում ենք մեր լեզուն։

Միսաար

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՆՊԱՍՏԻ ԽՆԴԻՐԸ

Հայ կամաւորական խմբերը ռուսական բանակի մի մասը լինելով հանդերձ, մեզ անհասկանալի պատճառով մինչ այսօր այդ անձնազոհ մարտիկների հարազատները պետական օգնութիւնից զրկւած են, թող թէ հասարակական - բարեգործական օգնութիւնը, որը կենտրոններում դուցէ գոյութիւն ունի, մինչդեռ գաւառները մոռացութեան գիրկն են նետւած։

Չնայած փոխարքայութեան հայ մարտիկների ընտանիքներին տալիք պետական նպաստի կանոնների թերթերում հրապարակելուն, մինչև այժմ քաղաքային վարչութիւնները, որտեղից տրւում է պետական նպաստ, միշտ իրենց դիմող կամաւորների ընտանիքներին մերժել և պատասխանել են, թէ այդ մասին ոչինչ իրենց կարգադրած չէ և յայտնի չէ։

Դեռ փետրւար ամսին «Արև» թերթում այս խնդիրը հրապարակի վրայ էինք դրել և յորդորել ազգային մարմիններին ուր որ հարկն է միջնորդեն, որ այդ կարգադրութիւնը թղթի վրայ չմնայ, այլ գործադրութեան մէջ մտնի։ Սակայն ինչպէս ժամանակն ու իրականութիւնը ցոյց տւաւ, մեր ղեկավար ազգային մարմինները իրենց գործունէութիւն ու հոգատարութեան ընդգրկում չկանէին այդ մէջ ներքին հարցը ...

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Թիֆլիս, 28 յունիսի

ԻՐԱԻՈՒՆՔԻ ՌԱՌԱԲԱՌՈՎ

Հայոց Կաթողիկոսը անցեալ օր ժամանեց Թիֆլիս և ընդունեց համեստ, պաշտօնական հանդիսաւորութեամբ։

Կաթողիկոսական սանը դարերից ի վեր — հայ քաղաքական անկախութիւնը կորսւելուց յետոյ — այնքան բարձր է, պատկառելի, նուիրական հայ ժողովրդի աչքում, որ Կաթողիկոսի սոսկ տեղափոխութիւնը Էջմիածնից մի ուրիշ վայր, դառնում է մի տեսակ great event, «խոշոր անցք»։ Հարկաւ, ժողովրդական ոգևորութեան ու մեծարանքը գլուխ գնահատել սանի հետ նաև անձը և այդ ոգևորութիւնը առանձնապէս բուռն է լինում, ինքնաբերաբար ու ծաւալուն՝ երբ ժողովրդի հանդէպ կանգնած է լինում մի խոշոր հեղինակաւոր ու արժանաւոր անձ։

Կաթողիկոսի այցը Թիֆլիս՝ և առաւել նշանակալի է այսօր՝ երբ այդ այցի հետ կապւած են հայ ազգային ճակատագիրը շօշափող ցաւոտ խնդիրներ։ Ինքն այցելուն՝ բարձրաձայն յայտարարեց այդ պաշտօնական ճառերին պատասխանելով։ Նա ասաց, որ «եկել է Բարձր Իշխանութիւնից դարման, սպեղանի խնդրելու» իր բազմաչարչար հօտի համար...

[illegible]

ՊԱՏԵՐԱԶՄ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

ԳԼԽ. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՇՏԱԲԻՑ

25 յունիսի

Արեւմտեան ճակատ.—Տարօնի Սուրբի շրջանում, Զարատրիյակի ճակատամասից դէպի արեւմուտք մեր զօրքերը թշնամուն յետ մղեցին...

[illegible]

Կովկասեան ճակատ.—[illegible]

25 յունիսի

Արեւմտեան ճակատ.—[illegible]

ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐՈՒ ՊԱՏՄԱԾԷՆ

Վերջին հայկական անհանգիստ կոտորածի ժամանակ, թրքական աշխատաւորական շարքերու մէջ գտնւող հայ զինւորներէն 220 հոգիէ խումբ մը Տրապիզոնէն ճամբայ կը հանուի դէպի . . . . . . Մինչև Աթլը-Բիլիսէ հասնիլը այդ խմբէն 20 հոգի կ'անյայտանան. այդտեղ տրապիզոնցիները դատելով՝ իրենց ընտանիքներուն հետ կոտ-...

[illegible]

Ու գիրքեր վերջ է տըրւում մեր շրջանում նրանց աւարառութիւններին։

Նշ. Մակինց

[illegible]

Վ. Վարդ.

„ՀՈՐԻԶՈՆԻ" ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՑ

Մակու, 18 յունիսի

«Հորիզոնի» ընթերցողների ... [illegible]

[illegible]

Տ. Ա.

ԹԱԳԱԴՐՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Թեհրան, 15 յունիսի

[illegible]

Թերբի և յորդի պահեստներ, հիւսիսային Եփրատի ճակատի շատ վայրերում դարձեալ բորբոքեցին յամառ կռիւները։ Բարանովիչիից արևելք կռիւները մղւում են առանձին յարձակումներով։ Թշնամին կատաղի հակայարձակումների է դիմում։ Ընդհանուր դրութիւնն անփոփոխ է մնում։ Մնացած ճակատամասերի վրայ առայժմ նշանակելի ոչինչ չկայ։

26 յունիսի

Արեւմտեան ճակատ.—Բուկովինայում, Կիմպոլունգից արևմուտք Ֆունդուլ—Մոլդաւա և Բալկաուտա գիւղերի մօտ հակառակորդը մեր մղեց մեր կողմից՝ այդտեղ թողնելով բազմաթիւ դիակներ։ Գերի վերցրինք 7 սպայ և 530 զինուոր։ Կատարուած հաշիւների համաձայն, գեներալ Լեչիցկու բանակը յունիսի 10-ից մինչև 24 գերել է 674 սպայ, 30,875 զինուոր, 18 թնդանօթ, 100 գնդացիր և 14 ռումբի արկղ։ Մնացած ամբողջ ճակատի վրայ նշանակելի բան չկայ։

Սեւ-ծով.—Թշնամու սուզանաւը առանց նախազգուշացնելու ընկղմեց «Յառաջ» հիւանդանոց նաւը, որ կրում էր բոլոր որոշիչ նշանները։ Կորան 7 հոգի, մնացածներին ազատեցին։

Կովկասեան ճակատ.—Երզրումի քաղաքի միջօրէականից հարաւ յունիսի 25-ի կռիւներում մեր մի զօրասիւնը գերի վերցրեց 60 սպայ, 4 բժիշկ և 1050 զինուոր, նոյնպէս բազմաթիւ ձեռքի հրացէն, փամփուշտ և պէղման գործիքներ։

26 յունիսի

Արեւմտեան ճակատ.—Գեներալ Լէշի քաջարի զօրքերի յարձակումը դէպի ստորին Ստոխոդ շարունակւում է։ Թշնամին հանդուրժում է մեծ անկարգութեամբ։ Սարնի—Կովել երկաթուղագծից հարաւ կռուով վերցրինք Գուլևիչի և Կաշեովկա գիւղերը։ Արսանովիչի—Շանովկա—Դուշչէ գիւղերի շրջանում անընդհատ հրդեհներ են։ Երեկ, յամառ կռիւներից յետոյ, գեներալ Լեչիցկու զօրքերը հարաւային Գալիցիայում գրաւեցին Դելեատին կարեւոր հանգուցային կէտը։ Թշնամու թողած կէտերում վերցրինք ռազմամթերքի պահեստներ (պողպատէ վահաններ, ձեռնառումբեր, փամփուշտ և երկաթաթել)։ Բարանովիչից արևելք և հիւսիս-արևելք ճակատամասում բաց առաջնոյն յամառ կռիւներ են տեղի ունենում թշնամու հետ, որ յուսահատ դիմադրութիւն է ցոյց տալիս։

Կովկասեան ճակատ.—Յունիսի 24-ից 25 գիշերով թուրքերի յարձակումը Պլատանա քաղաքից արևմուտք շրջանում յետ մղւեց մեր կրակով։ Երզրում քաղաքի միջօրէականից արևմուտք մեր զօրքերը մի շարք թուրքական դիրքեր գրաւեցին՝ գերելով 67 սպայ, որոնց մէջ երկու վաշտի հրամանատարների և մի մարտկոցի հրամանատարի, և 799 զինուոր (ասկեար), 7 գնդացիր և 1 թնդանօթ։

ՏԱՃԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԼՈՆԴՈՆ, 23 յունիսի (ուշացած).—Հաւայինների պալատում Տեննանտը հաղորդեց, որ գեկուցումներ են ստացւած Քերբելայում ապրիլի 9-ից մինչև մայիսի 1-ը տեղի ունեցած անկարգութիւնների մասին։ Անկարգութիւններին առաջացել են ազգաբնակութեան դրդմամբ թուրքերի դէմ։ Թուրք զօրամասից կառավարութիւնը Բաղդադից օգնութեան կանչել է զօրքեր, որոնք յարձակւեցին Քերբելայի վրայ, սակայն յարձակումն անաջող էր։ Թուրքերը նահանջեցին թնդանօթների կրակով և կուի ժամանակ սաստիկ վնասեցին Քերբելայի նւիրական շէնքերը։

ԹԵՀՐԱՆ, 23 յունիսի.—Լուրեր են ստացւած, որ թուրքերի յարձակումը Քիրմանշահի շրջանում կասեցւած է։ Թեհրանում լիակատար անդորրութիւն է տիրում։ Հասարակութեան օգտամտադրութիւնը ռուսասէրին է։

ՓԱՐԻԶ, 24 յունիսի.— Պատասխանելով արտաքին գործերի յանձնաժողովին կողմից ընդունած բանաձևերին մինիստրներին անցնելու մասին, մինիստրական խորհրդի նախագահ Բրիանը հաղորդեց, որ դիւանագիտական կառավարութիւնը դիմել է հիւսիս-ամերիկեան կառավարութեան՝ խնդրելով Բ. Դռան ուշադրութիւնը դարձնել և անպատիժ չթողնել մահապատիժներն Օմար Էմիրի և անւանի սիրիացիների, որոնց միակ մեղքը նրանում է կայանում, որ անձեր են ֆրանսիական քաղաքակրթութեան։ Միաժամանակ Ֆրանսիան Բ. Դռան համաձայնութիւնն է ուզում, որ ամերիկեան օժանդակիչ կոմիտէի միջոցով կենսամթերք հայթայթէ Սիրիայի ազգաբնակութեան։

ԱԹԵՆՔ, 25 յունիսի.—Գալից հաղորդում են, որ Թրակիայում գտնւող և գերմանացի սպաների կողմից վարժեցւող թուրքական զօրքերի մի մասը յառաջիկայ շաբաթ պիտի ուղարկւի Փոքր Ասիա։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏ

ԼՈՆԴՈՆ, 24 յունիսի. — Հաղորդագրութիւն Ֆրանսիայում գտնւող անգլիական գլխաւոր շտաբի։ Լաբուասսելից արևելք, կատաղի կռւից յետոյ, որի մէջ հակառակորդը ծանր կորուստներ կրեց, մենք վերցրինք մի ուրիշ խրամատ 1000 եարդ ճակատի վրայ, որը մենք հիմա ամուր պահում ենք մեր ձեռքում։ Ի մէջ այլոց երեկ գիշեր Ալբերտի մօտ մենք վերականգնեցինք ուժեղ յարձակումը։ Արշալոյսին գերմանացիները ուժեղ գրոհներ տւին նոր խրամատների վրայ Անկրաէի մօտ, Վերուայում և Ֆրիկուրի մօտ։ Գրոհները յետ են մղւած ամբողջ ճակատի վրայ։ Անկրի և Սոմմայի միջև յամառ կռիւ է։ Մինչև հիմա մեր հետևակազօրքը մի քանի ակտիւային յաջողութիւններ ձեռք բերեց Օվիլլեէի, Լաբուասսելի և Կոնտալմեզոնի շրջաններում, իսկ Տիեպվալից հիւսիս արևմուտք թշնամուն աջողւեց վերադրաւել նախապէս կորցրած դիրքերից 200—300 եարդ։

ՓԱՐԻԶ, 24 յունիսի. — Երեկոյեան պաշտօնական հաղորդագրութիւն։ Մաասի աջ ափին բաւական եռանդ կռիւ էր ցերեկայ ընթացքում Տիոմոնի ամրութիւնների շրջանում։ Գերմանացիները, նախապէս ռմբակոծելուց յետոյ, մի քանի անգամ յարձակւեցին մեր դիրքերի վրայ։ գրոհներից մէկը նրանց հնարաւորութիւն տւեց հասատուել մեր խրամատների առաջապահ մասում, սակայն մեր հակայարձակումով վերականգնեցինք ամրութիւններին կէս գտնւող մեր գիծը։ Թշնամու ուրիշ փորձերը յետ վանւեցին գնդացիրների կրակով և նրան արժեցին յուրջ կորուստներ։

ՓԱՐԻԶ, 25 յունիսի. — Ցերեկւայ պաշտօնական հաղորդագրութիւն։ Սոմմայի գետի ճակատի վրայ վատ եղանակը խանգարում էր գործողութիւնները։ Ցերեկի վերջում ֆրանսիացիները գրոհ տւին Բելուա-ան-Տերի մօտ՝ վերցնելով 350 գերի։ Ֆրանսիացիները ձեռնառումբերի և գերմանական խրամատային անցքերի օժանդակութեամբ առաջացան Էստրէեից արևելք՝ գերելով 500 գերմանացի։ Լասինէյից հիւսիս գերմանական մի զօրախումբ փորձեց գրաւել մի փոքր պոստ, սակայն ցրիւ տրւեց հրացանային կրակով։ Վերդենի հիւսիսային ճակատում, «304» բարձունքի, Էնի, Մաւինի, նոյնպէս Դանլու մարտկոցի ճակատամասերում կատաղի թնդանօթաձգութիւն էր տեղի ունենում։

ԼՈՆԴՈՆ, 25 յունիսի.— Պաշտօնական հաղորդագրութիւն Ֆրանսիայում գտնւող բրիտանական գլխաւոր շտաբի։ Ջնայած թշնամու յամառ դիմադրութեան, մեր հետևակազօրքը արտիլերիայի պաշտպանութեան տակ քաջաբար շարունակեց առաջանալ։ Այս առաւօտ գրաւեցինք մի քանի կարևոր կէտեր։ Կատաղի ռմբակոծութիւնից յետոյ մենք գրոհ տւինք Տիեպվալից հարաւ «Լէյպցիգի դիրք» կոչւած անւոր ուժեղ ամրութեան վրայ, որ գտնւում էր գերմանական գծերի ղուրս ցցւած մասում։ Թշնամին այստեղ գործադրել էր իր հնարագիտութիւնն և այդ կէտը ամրացրել էր 20 ամիսների ընթացքում։ Աւելի հարաւ մեր մի ջոկատը, արևմուտքից յարձակւելով գերմանական գծերի միջից ճանապարհ բացեց 500 եարդ տարածութեան վրայ՝ դէպի գերմանական Օւիլլեէր պաշտպանողական ամրութիւնը, կատաղի կռւ է մղւում այդ գիւղը գրաւելու համար։ Անցած գիշերւայ տաքղութիւնը զարգացնելով Լաբուասսելից արևելք—մենք առաջ տարանք մեր գիծը և գերմանական մի քանի խրամատներ վերցրինք մօտ 2000 եարդ խորութեամբ և 1500 եարդ երկարութեամբ, որի միջոցին գրոհով թշնամուն յետ շպրտեցինք Ֆրիկուրից հիւսիս երկու անտառներից և խրամատային երկու շարքից։ Պրուսական հեծելազօրը (գւարդիան) կռւի ուղարկեց առաւօտեան ժամը 10 ին Կոնտալմեզոնից արևելք՝ մեզ յետ մղելու համար յուսահատ ճիգով, սակայն յետ վանւեց մեր կրակով։ Այդ պատճառով թշնամին նահանջից հիւսիսային ուղութեամբ՝ 700 գերի թողնելով մեր ձեռքում, որոնք պատկանում էին գւարդիան գնդերի։ Կէսօրին մեր հետևակազօրքը գրոհ տւեց Կոնտալմեզոն գիւղի վրայ, սակայն այնտեղից յետ մղւեց ուժեղ հակայարձակումով։ Այսօրւայ ընթացքում թշնամու կորուստները չափազանց լուրջ պէտք է լինին, քանի որ զօրքերը բաց վայրով նահանջելով ռմբակոծւում էին մեր արտիլերիայով։ Դրանից բացի, մենք ուժեղ կրակ բացինք Բեզանտին գիւղի վրայ, որ լի էր գերմանական պահեստի զինուորներով։ Մի գերի սպայ հաղորդում է, որ իր վաշտն ընկել է գնդացիրի ուժեղ կրակի տակ, 300 ոտք բարձրութիւնից մեր մի աէրօպլանի կողմից, երբ վաշտը կուի վայրն էր գնում։ Շաւառով նոյն վաշտը հեռաձիգ թնդանօթների ռմբակոծութեան ենթարկւեց։ Դրանից զատ, ցերեկով անձրև էր գալիս, որ կակղեցրել էր հողը և խրամատները ողողել, որով վատացել էր զօրքերի դրութիւնը։

ՓԱՐԻԶ, 25 յունիսի. — Երեկոյեան պաշտօնական հաղորդագրութիւն։ Սոմմա գետից հիւսիս մեր զօրքերը, չնայած շարունակւող անձրևին ու մառախուղին, գրոհ տւին Երդևկուր գիւղի և նրանից հիւսիս գտնւած բլուրի վրայ։ Բրիտանական բանակի գործողութիւններին կապակցելով, որ իր կողմից յարձակւել էր Տրոնի անտառի և գաւառակի վրայ, որ անտառից 35 բայլ հարաւ-արևելք է գտնւում, մեր հետևակազօրքը շնորհիւ իր գրոհի թափին՝ գրաւեց յարձակման նպատակակէտերը։ Գերմանական երկու հակայարձակումներ, որոնցից մէկն ուղղւած էր հիւսիսից, միւսը՝ ցերեկով մեր գրաւած բլուրի արևելեան կողմից, ջախջախւեցին մեր կրակի դէմ. գերմանացիները ճակատամարտում խոշոր կորուստներ ունեցան և մեր ձեռքում թողեցին 260 գերի։ Սոմմայից հարաւ ցերեկւայ ընթացքում էական ոչ մի դէպք չպատահեց։ Վերդենի ճակատի վրայ ընդմիջումներով թնդանօթաձգութիւն է տեղի ունենում մեր առաջին և երկրորդ գծերի վրայ։ Մաասի ձախ ափին շարունակւում է արտիլերիայի եռանդ գործունէութիւն Սռ.վիլից հիւսիս, Ֆլեւրին անտառի և Դանլու մարտկոցի ճակատամասերում։ Ճակատի մնացած երկայնքի վրայ սովորական թնդանօթաձգութիւն է։

ԼՈՆԴՈՆ, 25 յունիսի. — Հաղորդագրութիւն Ֆրանսիայում գտնւող բրիտանական գլխաւոր շտաբի։ Սաստիկ անձրևները խանգարեցին գործողութիւնները։ Անցած գիշեր Անկրի և Սոմմայի միջև մեր զօրքերը ամրացրին երեկ գրաււած առաջապահ դիրքերը։ Թշնամին մի քանի ական պայթեցրեց Ռոլինկուրի և Հաննեսքլերնի դիրքի մօտ, սակայն անաջող։ Մենք ական պայթեցրինք Ֆիւլլիւից հիւսիս-արևելք՝ թշնամու գալերեան քանդելու նպատակով։ Մեր աէրոպլանները կրակ բացին Դուէի՝ թշնամու օդանաւային կայանի վրայ և բոլորովին քանդեցին կայանները՝ միաժամանակ հասցնելով ուրիշ շատ վնասներ։ Վերջին օրերում մենք վերցրինք 20 թնդանօթ, 51 գնդացիր, բազմաթիւ ականնետ հրացան, խրամատային մորտիրներ, ռմբաձիգներ, լուսարձակներ և ուրիշ քանակութեամբ ուրիշ նիւթեր, որոնց հաշիւը դեռ չէ կազմւած։

ՓԱՐԻԶ, 26 յունիսի.— Ցերեկւայ պաշտօնական հաղորդագրութիւն։ Սոմմայի երկու ափերին գիշերը խաղաղ անցաւ։ Երդևկուրի շրջանում մեր երեկ վերցրած գերիների ընդհանուր թիւն է 633, որոնց մէջ 10 սպայ։ Վերդենի ճակատի վրայ գերմանացիները շարունակեցին անընդհատ ռմբակոծել Շատտանկուրի, Ֆլեւրի և Դանլու մարտկոցի հատւածները։

ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՀՌՈՄ, 24 յունիսի.—Հաղորդագրութիւն իտալական գլխաւոր շտաբի։ Մեր հետևակազօրքը շարունակում է առաջանալ Ռիօ-Ֆրեդդօ և Աստիկօ հովիտների երկայնքով։ Օծետէ-Կանովիերի սարահարթի մօտ մեր զօրքերը արտիլերիայի պաշտպանութեան տակ վերսկսեան գրոհները՝ թշնամու Մոնտէ-Ինտերրոտտօ և Մոնտէ-Կամպիգոլէտտօ ուժեղօրէն ամրացւած գծերի վրայ։ Մենք վերցրինք թշնամու երկու պաշտպանողական կարեւոր կէտերը Կաստելեթտօ և Մալգադեցցայի մօտ՝ գերելով 359 հոգի, որոնց մէջ 5 սպայ, և 3 գնդացիր։ Մեր գրաւած դիրքի վրայ կատաղի հակայարձակումները վանւեցին թշնամու համար ծանր կորուստներով։ Կամպելլօ հովտում մենք շարունակեցինք դէն շպրտել թշնամու զօրամասերը Մալգա-ից արևելք գտնւող լանջերից և 102 գերի վերցրինք։ Մոնֆալկոնէ ճակատամասի վրայ թշնամին փորձեց երկու գրոհ տալ Սելցից արևելք մեր նոր դիրքերի վրայ, սակայն ամենայն հարւածով յետ վանւեց՝ մեզ թողնելով մօտ 30 գերի։

ՀՌՈՄ, 25 յունիսի.—Հաղորդագրութիւն իտալական գլխաւոր շտաբի։ Վերին Աստիկոյի աւազանում մեր զօրքերն ամրանում են իրենց նոր գրաւած դիրքերում և առաջանում են դէպի թշնամու զօրագծերը։ Երեկ Ազիագօ սարահարթի վրայ շարունակւում էր բաւական յամառ կռիւը։

ՌՈՒՍ ՃԱՊՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ

ՏՕԿԻՕ, 26 յունիսի.—Ռուս-ճապոնական համաձայնութեան բնագրի հրատարակութեան առթիւ հոկայական ցոյց տեղի ունեցաւ կայսերական պալատի, արտաքին գործերի մինիստրութեան և ռուս դեսպանատան առջև։ Մի քանի հազար հոգի գոյնզգոյն լապտերներով թափօրով անցան այդ շէնութիւնների առջևից «բանզայ» բացականչելով։ Բազմութիւնը ջերմագին ողջունում էր ռուսական դիպլոմատիային։

ՄՈՍԿՎԱ, 25 յունիսի.— Ճապոնական հիւպատոսարանում տեղեկութիւններ ստացւեցին, որ վերջնականապէս որոշւած է Ռուսաստանում ընդունելութիւնը ճապոնական պարլամենտական պատւիրակութեան՝ վերին պալատի անդամների կազմով։ Պատւիրակութեան մէջ են մտնում վերին պալատի բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչները։ Պատւիրակութեան գլուխ է կանգնած կոմս Տերաուխման։

ՏՕԿԻՕ, 26 յունիսի.— Յունիսի 27-ին կը կայանան տօնակատարութիւններ ռուս-ճապոնական համաձայնութեան հրատարակման առթիւ՝ մասնակցութեամբ վերին և ստորին պալատի նախագահների, Տոկիօի քաղաքագլխի, ռուս ճապոնական առևտրա-արդիւնաբերական և ֆինանսական գործիչների։ Ամենայն հաւանականութեամբ փողոցներում ցոյցեր կը կատարւեն։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՄՈՍԿՎԱ, 26 յունիսի.—Համառուսական Դերբի մրցանակը 50,000 ռ. տարաւ «Մակբեթը», երկրորդը՝ «Թաւրիդը», երկուսն էլ Մանթաշեանի և նրա ձիաբուծարանից։ Կայսերական 12,000 ռուբլու առաջին պարգևը տարաւ Մանթաշեանի «Գոդնին», երկրորդը՝ Լազարեանի «Ռոբերտը»։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՍՏՈԿՀՈԼՄ, 25 յունիսի.—Բեռլինից հաղորդում են, որ Լիբկնեխտն ու նրան մեղադրող ընդհանուր դատախազը դժգոհ լինելով վճռից՝ վճռաբեկ բողոք են տալիս Բեռլինի գերագոյն զինուորական դատարանին։ Գործի քննութիւնն ենթադրւում է օգոստոսի ընկզբին։

ԲԱԶԵԼ, 24 յունս.—Լոզանում ազգութիւնների խորհրդաժողովը վերջացաւ և փակւեց կատարեալ անաջողութեամբ, երբ վերջնականապէս պարզւեց նրա կողմնապահութիւնը։ Լոզանի նշանաւոր պրոֆեսոր Ռէյսին, երբ սա ուզում էր խօսել Ասորիայի ճնշումների մասին, խօսք չտւեց։ Շւէյցարիայի մամուլը մատնանշեց խորհրդաժողովի միակողմանիութիւնը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԹԻՖԼԻՍ

Կիրակի, յունիսի 26 ի, առաւօտեան ժամը 8 և կէսից, կայարանում, Արքայական սրահում հաւաքւել էին մեծ թւով բարձրաստիճան անձինք և հասարակական հիմնարկութիւնների ներկայացուցիչներ, Ամենայն Հայոց Կաթողիկոսին դիմաւորելու։

Վեհափառի սալոն-վագոնը 10 ժ. 15 րոպէին հասաւ կայարան։ Իր շքախմբով վագոնից դուրս գալուն պէս Վեհափառին բարի գալուստ մաղթեցին Փոխարքայի զինուորական մասի օգնական գեներալ Եանուշկեւիչը, քաղաքացիական մասի օգնական իշխան Օրլովը, Վրաստանի էկզարխի ներկայացուցիչներ Նազարիյ վարդապետը և ծերացած քահանան, Թիֆլիսի քաղաքագլուխ Խատիսեանը, Թիֆլիսի նահանգապետը իր օգնականով, զինուորական շրջանի գլխաւոր գեներալ Վոլսկին, փախստականների գործի գլխաւոր լիազօր գեներալ Թամամշեւը, զինուորական հաղորդակցութեան կառավարիչ Վասիլեւսկին, կարգադրիչ յանձնաժողովի նախագահ Տ. Նազարբեկը և ուրիշ բարձրաստիճան անձինք ու հասարակական հիմնարկութիւնների ներկայացուցիչներ։ Ներկայ էին նաև հոյսաէրները անգլիացի միստր Բաքըստոնը և ամերիկացի միստր Մակկալամ։

Բոլորին էլ Նորին Սրբութիւնը օրհնում էր։

Պլատֆորմում հաւաքւել էին քաղաքային վարչութեան անդամներ՝ Մ. Ջաքարը, ժուրուլին, քաղաքային հայ խորհրդատուներ մի մասը և գպրոցական հասարակական հիմնարկութիւնների ներկայացուցիչները։

Գ. Ս. Յարութիւնեանը, բարի գալուստ մաղթելով հայ ժողովրդի և ազգային հաստատութիւնների կողմից, դիմեց Վեհափառին հետևեալ ճառով.

«Վեհափառ Տէր.

Միայն ջերմ սէրը, որ Դուք տածում էք դէպի Ձեր հօտը, և մանաւանդ այն անթիւ հոգսերն ու ցաւերը, որ ծանրացել են Ձերդ Վեհափառութեան վրայ ներկայ արիւնահեղ պատերազմի ժամանակամիջոցում տաճկահայերի վիճակի մասին, կարող էին դրդել Ձեզ կատարել այս ուղևորութիւնը։ Մեր հաւատն ու յոյսը առաւել ուժեղ են և անխախտ, որ Մեծ Ռուսիոյ և նրա դաշնակից պետութիւնների հովանաւորութիւնն ու պաշտպանութիւնը կը տան հայ ազգին արժանաւոր հատուցումն այն անասելի զոհաբերութիւնների փոխարէն, որ վիճակւել է կրել նրան, և Հայոց Կաթողիկոսն էլ կը մխիթարւի, տեսնելով իր Կաթողիկոսութեան ժամանակ իր ազգի և լաւ օրերը»։

Շնորհակալութիւն յայտնելով Մ. Յարութիւնեանին, Վեհափառը խոստացաւ նրա ողջոյնին պատասխանել Վանքի տաճարում։

Արքայական սրահից դուրս գալով, Կաթողիկոսը նստեց վեց ձի լծած բաց կառք և դիմեց դէպի Վանքի աւագ եկեղեցին՝ առաջնորդութեամբ երկու զաւազանակիր քահանաների և ուղեկցութեամբ իր շքախմբի՝ Մեսրոպ եպիսկոպոսի, Խորէն եպիսկոպոս Մուրադբէկեանի, Ներսէս եպիսկոպոս Մելիք Թանգեանի, դիւանապետ Տիրայր վարդապետի և երկու զաւազանակիր վարդապետների, որոնց յաջորդում էին բարձրաստիճան անձանց աւտոմոբիլները, ապա կառքերով կարգադրիչներն ու ներկայացուցիչները, Վոկզալնայա, Նիկոլաեւսկայա, Պիրոգովի և Միքայէլեան փողոցներով և Նիկոլայեան կամրջով։ Ալեքսանդրեան այգու մօտ Վեհափառին դիմաւորեց զգեստաւորւած հայ հոգևորականութիւնն ու ժողովուրդն և համքարները իրենց դրօշակներով։ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կառքից իջնելով մտաւ ամպովհանու տակ և հոգևորականութեան առաջնորդութեամբ ոտով դիմեց Վանքի աւագ եկեղեցին։

Վանքի բակում խմբւած էր թէ ծխական և թէ միջնակարգ դպրոցների աշակերտութիւնը, ինչպէս և գաղթական որբերը։

Ճանապարհին մի քանի տեղ շքեղութը լուսանկարւեց։

Ժամը 12 ին Կաթողիկոսը Վանքի աւագ եկեղեցին հասնելով, կարճ աղօթքից յետոյ դիմեց Վեհարան, ուր ազգային հիմնարկութիւնների կողմից բարի գալուստ մաղթեց «Մշակի» խմբագիրը, որին Վեհափառը խոստացաւ կէս ժամ յետոյ պատասխանել եկեղեցում։

Մօտ մի ժամ հանգստանալուց յետոյ, ժամը 12 և կէսին Կաթողիկոսը իջաւ եկեղեցի պատարագին ներկայ լինելու։

Այս անգամ հասարակութիւնը շատ քիչ կար թէ բակում և թէ եկեղեցում։ Պատարագին երգում էր երկսեռ քառաձայն խումբը։

«Հայր մերից» առաջ Վեհափառը բարձրացաւ ս. սեղանը, և բազմելով բազկաթոռի վրայ՝ դիմեց ժողովրդին իր հայրապետական ճառով։

Նա սկսեց իր ողջոյնը ժողովրդին, Մ. Աթոռի հովանին հայցելով իր հօտի համար։ Նշ. ապա իր ճառի մէջ Վեհափառն ասաց, որ 1914 թ., երբ նա այցելեց Թիֆլիս, խաղաղ ժամանակներ էին։ Մինչդեռ այժմ, մեր մայր երկիրը մատնւել է անլուր աղէտի. Հայաստանը համարեա աւերւած է, նրա բնակիչների մեծ մասը սրի է քաշւած անողոք դարաւոր թշնամու ձեռքով, սատանդական, մերկ ու քաղցած, հիւանդ ու ցաւատանջ ապաստան գտաւ Կովկասի հայութեան մէջ։ Վեհափառը, որի սիրտը լալիս է իր ժողովրդի գլխին պայթած սոսկալի փորձութեան հանդէպ, եկել է իր սիրեցեալ հօտին մխիթարելու, սփոփելու նրան, իր ներկայութեամբ և Բարձրը իշխանութիւններից դարման, ապաւէն խնդրելու իր ժողովրդի կարիքների համար։

Նկարագրելով էջմիածին ապաստանած թուրքահայ փախստականներին խնամելու դժւարին գործը թէ եղբայրական օգնութեան և թէ կառավարական միջոցներով, Նորին Վեհափառութիւնը շատ տեղին նկատեց, որ մեր պարծանք գիւղացիութիւնն էր, որ իր առանց այն էլ աննախանձելի նիւթական կացութեան մէջ հոգաց փախստական իր եղբայրներին կերակրելու և ապաստան տալու ծանր գործը և ամբողջ գործի ծանրութիւնը համարեա իր վրայ կրեց։ Գիւղացիութիւնը պահեց փախստականներին իր խրճիթների յարկի տակ և իր ցամաք հացից բաժին հանեց անտրտունջ իր տարագիր քոյրերին և եղբայրներին։ Վեհափառը գոհ է և հայ աշխատաւոր դասից, որ չխնայեց իր լումաները փախստականներին օգնելու սուրբ գործի համար։ Սակայն մեր հարուստ դասակարգը շատ չնչին մասնակցութիւն է ցոյց տւել մինչև օրս այդ մեծ գործին, որոնցից երկու-երեքը միայն, թերևս, կարողանային հատուցանել նպաստի այն քանակը, որ մինչև այժմ ստացւած է։

Վեհափառը օրինակ բերելով յոյներին, յորդորեց հարուստներին առանձնապէս և առհասարակ հայ ժողովրդին չխնայել իրենց միջոցներից մասն յատկացնելու փախստականներին օգնելու համար, քանի որ կարիքը մնում է դեռ անսուր, քանի որ Հայաստանում ծխում են հայ շինականների հրդեհւած գիւղերը, քանի որ մընացել են անհերկելի նրա դաշտերը։ Հայաստանի աւերւած ու քայքայւած տնտեսութիւնը վերականգնելու կոչ ուղղեց Վեհափառը իր հօտին։ Իր այդ յորդորը նախաբանեց սերմանացանի առակով և յոյս յայտնեց, որ հայ սրբտերում նա կը գտնէ պարարտ հող, որովհետև հայ ազգը էն գլխից կենսունակ ազգ է։

Վերջում Վեհափառը յորդորեց թողնել այս տագնապալի օրերում բոլոր կուսակցական հաշիւները, ներքին վէճ ու երկպառակութիւնները և միանալ համերաշխ գործակցութեամբ ընդհանուր գործի համար, որովհետև հանրական շահն այդ է պահանջում, առանց որի ոչ մի գործ գլուխ գալ չէ կարող, առաւել ևս մի այնպիսի ծանր և պատասխանատու գործ, որի առաջ կանգնած ենք ամենքս։

Այնուհետև Կաթողիկոսը դիմեց Վեհարան, որին առանձին-առանձին այցելութիւն արին՝ վրաց ազնւականների պարագլուխ օգնական Ջնլուկաեր, քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը, Փոխարքայի օգնականներ գեներալ Եանուշկեւիչը և իշխան Օրլովը։

Ժամը 5-ին Վեհափառն իր շքախմբով այցելեց Կովկասի Փոխարքային։ Ունկնդրութիւնը տևեց 23 րոպէ, իսկ ժամը 6 ին փոխ-այցելութեան եկաւ Փոխարքան, որի ունկնդրութիւնը տևեց 10 րոպէ։

Երեկոյեան առաջնորդարանում հրավառութիւն կար։

—

Յաջորդ օրը, յունիսի 27-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը այցելեց Վրաստանի էկզարխին, իսկ յետոյ էկզարխը փոխ-այցելութիւն արեց։ Նոյն օրը Վեհափառին այցելեց գաղթականական գործի գլխաւոր լիազօր գեներալ Թամամշեւը։

ԳԱՂԹԱԿԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Գաղթականական գործի գլխաւոր լիազօր գեներալ Թամամշեւը յայտնել է Քաղաքների Միութեան լիազօր Ա. Խատիսեանին, որ փախստականների համար սուր-վարակիչ հիւանդանոց պէտք է հիմնել Թիֆլիսում, որի ծախսը հոգացւելու է գլխաւոր լիազօրի Քաղաքների Միութեան տրամադրութեան տակ այդ նպատակով դրւած 500,000 ռուբլուց։

Քաղաք. Միութեան Կովկասեան բաժանմունքն ի նկատի ունենալով, որ Ալեքսանդրապոլի շրջանի Նորաշէն և

մօտակայ գիւղերում գտնւող 538 փախստականների մէջ տարածւած են սուր-վարակիչ հիւանդութիւններ, խնդրել է փախստականների գործի գլխաւոր լիազօր գեներալ Թամամշեւին, որ այնտեղ բժշկա-ֆելդշերական կայան հիմնելու համար միանւագ տրւի 1,400 ռ. և ամսական՝ ծախսերի համար՝ 1,500 ռ.։

◆ Գաղթ. գործի գլխ. լիազօր գեն. Թամամշեւը յայտնել է Քաղաքների Միութեան Կովկ. բաժանմունքի լիազօրին, որ Միութեան փախստականներին պաշարեղէն մատակարարող սայլերը կովկասեան բանակի հրամանատարի կարգադրութեամբ պէտք է գնան զինւորական պաշարակիր սայլերի հետ՝ քրդերի կողմից յարձակման ու թալանի չենթարկւելու համար։

ԼՐԱՏՈՒ

ԹԻՖԼԻՍ

Փախստականների գործի գլխաւոր լիազօր գեներալ Թամամշեւը՝ Քաղաքների Միութեան Կովկասեան բաժանմունքի ընդհանուր բժշկա-սանիտարական մասի կառավարչի պաշտօնում հաստատել է բժ. Մեսնիկովին։

◆ Ադելխանովի գործարանի հագուստեղէնի կար ու ձևի բաժանմունքի բանւորները իրենց աշխատավարձի բարձրացման համար պահանջ էին ներկայացրել, առարկելով կեանքի թանգութիւնը։ Երկար բանակցութիւնից յետոյ նրանց պահանջները բաւարարւեցին։

◆ Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական ընկերութիւնը ստացել է կրկին մեծ քանակութեամբ խրձակապ (шпагатъ), որը վաճառւում է ընկերութեան մէջ փութը 30 ռուբլիով։

◆ Քաղաքային վարչութեան անդամ Մ. Աթաբէկեանի միամսեայ արձակուրդով քաղաքից մեկնելու պատճառով նրա պարտականութիւնները կատարելու է Գ. Ժուբուլին։

◆ Գիշերային երթեւեկութեան պատճառով տրամւայի վագոնների մեծ մասը փչացել է, շնորհիւ անբարեխիղճ վատմանների, նրանց անչափ արագ քշելուց ու անփոյթ վարւելուց։ Այդ առթիւ քաղաքային վարչութիւնը նկատողութիւն է արել տրամւայի վարչութեանը, որ սա նախազգուշացնի տրամւայի այդպիսի ծառայողներին։

◆ Այսօր, ցերեկւայ ժամը 2-ին նշանակւած է Սոլոլակի տունելի բացումը։

◆ Միքայէլեան փողոցում դռնապանի պաշտօնով ծառայութեան է մտել մի ռուս կին։

◆ Թիֆլիսի ֆաբրիկանտների և գործարանների տնտեսական ընկերութիւն է կազմւած արդէն, որին մասնակցում են 57 գործարաններ 6,000 բանւորներով։ Որոշւած է մօտ օրերս բաց անել սպառողական խանութ, որի համար ընկերութեան վարչութիւնն արդէն դիմել է քաղաքային պարենաւորման բաժանմունքին և խնդրել 500 փութ շաքար։

◆ Թիֆլիսի նահանգապետը բնակարանների վարձը թանգացնելու համար 500 ռ. տուգանքի է ենթարկել Ն. Դաւիդովսկուն, 300 ռ. Ն. Թոխաթելովին, 100-ական ռ. Մ. Բարսկուն և Վ. Կապանաձէին և բնակարանից դուրս անելու պատճառով 350 ռ. Յ. Գրադիաշւիլին։ Տուգանքը վճարելու անկարողութեան դէպքում սահմանւած է 1-ական ամիս բանտարկութիւն։

◆ Անդրկովկասեան երկաթուղու վարչութիւնը հրահանգել է բոլոր կայարանապետներին, որ Թիֆլիսի համար նշանակւած ձուն առանց նարեադի ընդունեն և անմիջապէս փոխադրեն Թիֆլիս։

◆ Պետրոգրադից հեռագրում են քաղաքային վարչութեանը, որ Թիֆլիսն իրաւունք ունի յունիս-յուլիս ամիսների համար էլի ստանալու 39 վագոն շաքար։

◆ Յունիսի 25-ին Թիֆլիսում ստացւած են 67 վագոն ալիւր և 13 վագոն շաքար քաղաքային վարչութեան անունով, բացի այս նոյն օրը կայարանում քաղաքն ունէր 13,000 փ. ալիւր։ Նոյն օրը կայարանում ստացւել է 56 վագոն կենսամթերք, զանազան անձանց անունով։

◆ Յունիսի 25-ին Բաթումից եկաւ № 60 սանիտարական գնացքը Լ. վիրաւոր և հիւանդ զինւորներով, որոնց թւում 15 սպայ։ Սանը հիւանդներն ու վիրաւորները թողնւած են Նաւթլուղի զինւորական հիւանդանոցի տնօրէնութեան, իսկ ճաշածները փոխադրւեցին Բագու։

◆ Ստացանք Լեոն Վարդապետեանի «Տառապանքի Արցունքներ» գրքից 100 օրինակ և յանձնեցինք Ազգային Բիւրոյին՝ կամաւորներին բաժանելու համար։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՅԱՐԱՆԻ ՏԶՐՈՒԿՆԵՐԸ

—

Բագու, 20 յունիսի

Բագւում տեղական բացառիկ պայմանների հետևանքով ամառը կեանքը ուղղակի անտանելի է, և շատերը ընտրում են մի կերպ քաղաքից փախչել, մանաւանդ փոքրահասակ երեխաներ ունեցող ընտանիքները։

Սակայն, դժբախտաբար, շատ քչերին է յաջողւում այդ Սոդոմ-Գոմորից ազատւել. առաջին արգելառիթ հանգամանքը, ի հարկէ, նիւթականն է. միջին դասակարգը գրեթէ այդ հնարաւորութիւնից զուրկ է, իսկ ովքեր քիչ թէ շատ հնարաւորութիւն ունեն, կանգնած են մի վիրին աստիճանի բարդ հարցի առաջ, այսինքն թէ ինչ միջոցով տոմսակ ճարեն։ Դա մի շատ հին վէրք է, որի վրայ ոչ ոք լուրջ ուշադրութիւն չի դարձնում։

Գնում ես քաղաքի գրասենեակը, տեսնում մի ահագին պոչ, որը ամբողջ գիշերը կանգնած է փողոցի դրան առաջ. ամեն մի յոյս կորցնում ես տոմսակ գտնելու։ Գնում ես կայարան. միևնոյնը այնտեղ ես տեսնում։ Ի՞նչ անել. ճամ դիմել։ Ահա այդ միջոցին է, որ «բարեբեր հրեշտակի» նման առաջդ ցցւում է յայտնի մի հիւրանոցի կոմիսիոները։

— Պարոն, կարե՞լ էք ինձ համար տոմսակ վերցնել։

Կոմիսիոները փորձւած հայեացքով ոտից գլուխ զննում է քեզ և ուր գնալդ տեղեկանալով, պատասխանում է թէ կարող է։ Հարցնում ես այդ «հրաշալիութիւնը» որքան է արժենալու։

— Իւրաքանչիւր տոմսակին 10 ռ.,— պատասխանում է սառնութեամբ։

Աչքդ թռում ես և խղճում ես աշխատում առարկելու, թէ տոմսակը հազիւ թէ այդքան արժենայ, «Մենք էլ պէտք է ուրիշներին բաժին հանենք», ասում է։

Ի հարկէ, ում համար այդ 10 ռուբլիները նշանակութիւն չունին, կը համաձայնի վճարել. իսկ 5—6 հոգուց բաղկացած մի ընտանիք, որ լայն միջոցներ չունի և չի կարող բացի տոմսակի արժէքից, 50—60 ռ. էլ կաշառք տալ, ի՞նչ անի. մնում է հրաժարւել ամառանոցից և ֆիզիքապէս քայքայւել։

Եւ այդպէս, այդ կայարան կոչւած վայրում, մարդիկ օրը ցերեկով անդադար կողոպտւում են և ոչխարի համբերատարութեամբ համակերպւում այդ աւազակային «չայկա»-ների պահանջներին, առանց որև է բողոքի ձայն բարձրացնելու. կողոպտում է ձեզ ամենավերջին նոսիլշչիկից սկսած մինչև ամենամեծ պաշտօնեան. սակայն, այդ ոչինչ։ Բաւական է, որ տոմսակ ճարւի։ Ոչ դրամագլուխ է հարկաւոր և ոչ գիտութիւն. բաւական է մի քանի վարձկան մարդիկ ունենալ քաղաքի գրասենեակում կամ կայարանի կասսի առաջ, և արդէն բոլոր պետամուտքի տոմսակները դրանց ձեռքումն է. Նոյն իսկ մի նոսիլշչիկ պարծենում էր, թէ որքան դժւարութեամբ է յաջողել կասսից նախօրոք տոմսակ վերցնել և առաջարկում էր կրկնակի արժէքով։ Չնայած քաղաքապետի հրատարակած պարտադիր կանոններին, որով մեծ տուգանք է սահմանւում այդ չարագործութեան դէմ, այնուամենայնիւ այս բողէին գնացէք կայարան և ձեր կոմիսիոնների գրպանները ուղղէք՝ խուզարկեցէք, տասնեակներով տոմսակ կը գտնէք նախօրօք գնւած, տոմսակներ, որ ազգաբնակութիւնը կարող էր ձեռք բերել սովորական գնով, եթէ այդ տզրուկներին հրապարակից հեռացնելու միջոցը գտնէր։

Վ. Դարբասեան

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ԴԱՇԲՈՒՌՈՒՆ.— Մայիսի 4-ին Գառնի-Բասարում սպանւած հայ գաղթականներից Մելիք Տէր-Գրիգորեան և Բաղդասար Սարգսեան Տաճկաստանից ցորեն բարձած գալիս անցնում էին Ղամարլու, հասնում են «Հասանխան» կոչւած թուրք գիւղը. հանգստութեան համար ցած են դնում բեռները գիւղին մօտիկ մի ջրի վրայ ու հաւաքւում հաց ուտելու։ Այդ ժամանակ յիշեալ գիւղացիներից մի 8—9 հոգի մեծ մահակներով զինւած գալիս են և յարձակւում գաղթականների վրայ։ Շատ ծեծելուց յետոյ, գըլխից վիրաւորում են մէկին և թափում Մելիք Տ. Գրիգորեանի 2 հատ ատամը։ Այդ ժամանակ Ալիղզլ գիւղացիներից մի քանի հոգի հայ մարդիկ հասնում են դէպքի վայրը և մի կերպ ազատում գաղթականներին։ Հեռանում են թուրքերը, տանելով գաղթականներից մի պիջակ, որի գրպանում եղել է մօտ 200 ռ. փող։ Գաղթականները նոյն օրը եկան ու գանգատւեցին մեր 2-րդ մասի պրիստաւին. վերջինս անմիջապէս կանչեց չարագործներին և իր արձանագրութեան հետ ուղարկեց Իգդիր։

Ս—Օ

Շուշի.— Յունիսի 19-ին, կիրակի օրը, ցերեկով Աղաբէգենց ձորում բարբարոսաբար ժողթել են շուշեցի Մկրտիչ Ստեփաննեանցին, դաշոյնով մի քանի տեղից ծակոտելով նաև մարմնի զանազան մասերը։ Սպանութեան պատճառը դեռ յայտնի չէ։ Կասկածով բռնւած են երկու թուրք, որոնց իբր թէ ձորում խաղալիս երկու երեխայ տեսել են, թէ ինչպէս նրանք վէճի բռնւեցին Մկրտչի հետ և սպանեցին։

— Այս տարի առհասարակ Շուշի ամառանոցաւորները քիչ են գալիս։ Պատճառը վերագրւում են Եւլախից Շուշի բերող ճանապարհի դժոխային չարչարանքներին և կառքերի սարսափելի թանգութեան.— մի հոգուց կառքն առնում է 25 ռուբլի, այնինչ անցեալ տարիները բերում էին 5—6 ռուբլով։ Բնական է, որ այդ չափերին պիտի հասնի ժողովրդեան տեղափոխութեան կառավարձը, քանի որ պոստը զբաղւած է խանութի ապրանք փոխադրելով։

Յ.

ԻԳԴԻՐ.— Երկու տարի է ահա, որ փակել են պետական և ծխական երկսեռ դպրոցները, որոնց շինութիւնները որբանոցի և հիւանդանոցի են ծառայեցնում։ Երկու հազարից աւելի երեխաներ թափառում են փողոցներում շնորհիւ մեր անտարբերութեան։ Մինչև այսօր գուցէ զանազան պատճառաբանութիւններ մէջտեղ բերւէին, բայց այժմ մեզ մնում է հասարակութիւնից մի պատգամաւորութիւն ուղարկել որբանոցի և հիւանդանոցի վարչութիւններին խնդրելու, որ նրանք տեղափոխեն մասնաւոր տներ, ի նկատի ունենալով, որ այժմ շատ մասնաւոր տներ դատարկւել են։

— Հունձն արդէն սկսել է, բերքը շատ լաւ է. առատ է նաև խաղողը։ Մայիսեան զով եղանակներից յետոյ, սոսկալի շոգեր են սկսել. գաւառական բժիշկ պ. Ասլանեանի ուշադրութիւնն ենք հրաւիրում փողոցների կեղտոտութեան վրայ. անհրաժեշտ է փողոցները օրական երկու անգամ ջրել և մաքրել. առանց խիստ միջոցների ոչ մի հետևանքի չենք հասնի։

Իգդիրցի

ԿՈՂԲ.— Յունիսի 19-ին կարկուտը հողի հետ հաւասարեցրեց Կողբի վերի ու ներքի Ծմրցւ կոչւած դաշտավայրի արտերն ու բանջարանները։

Ս. Թէոսեան

ԳՈՒԴԱՌՈՒՏ.— Տեղիս գրւած էր «Հորիզոնին» Փուղատի շրջանում յայտնւած աւազակների մասին, որոնց սպառնալիքներ էին ուղղել մասնաւորապէս հայ գիւղացութեան։ Այդ սպառնալիքներն են, որ այսօր իրագործում են։ Ամսոյս 14-ին Մեծարայ գիւղից 10 վերստ հեռու, անտառի մէջ սպանւած գտնւեց միևնոյն գիւղացի Սահակեան Բէշապեանի դիակը։ Սպանութիւնը կատարւած էր շատ վայրագաբար, ամբողջ դէմքը ջարդւած էր քարի և փայտի հարւածների տակ, մարմինը մերկացւած և հրացանի գնդակը գլուխը ծակած։ Սպանութիւնը կատարւած պիտի լինի ամսի 12-ին և յայտնեց միայն յաջորդ օրը, երբ ձին առանց թամբի և սանձի յայտնւեց տան դրանը։ Երկու օրւայ անընդհատ հետախուզութիւնից յետոյ է միայն, որ դիակը գտնւեց անտառի անթափանցելի խորքում։ Ինքնըստինքեան հասկանալի է դառնում այն անապահով և յուսահատական կացութիւնը, որի մէջ գտնւում է հայ գիւղացութիւնը, մանաւանդ, որ նրա գործը գիւղից դուրս է, արտերի և անտառների մէջ, կամ ցանկապատներ հսկել։

Անդր. Մխիթարեան

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Սեւաստոպոլից հեղինակաւոր աղբիւրից հաղորդում են մայրաքաղաքի թերթերին, որ ռուսաց նաւերը Անատոլիայի ափերին այս օրերս նորից խորտակել են թիւրքական 48 առագաստանաւ՝ բեռնաւած ալիւրով, կենսամթերքով և ռազմամթերքով։ Բացի սրանից, ոչնչացւած է ապրանքներով լի մի նաւամատոյց։

— Գեներալ Հրամանատարի վերջին հաղորդագրութիւններից մէկի մէջ Կովկասեան ճակատի վերաբերմամբ յիշատակւած էր, որ ռուսաց զօրքերը կռւում են Պարսկաստանում Քիրմանշահի շըրջանում։ Այս առթիւ մայրաքաղաքի թերթերը հաղորդում են հեղինակաւոր աղբիւրից, որ թիւրքերը յետ են մղել ռուսաց զօրքերին Բաղդադի շրջանից 50 վերստ դէպի հիւսիս-արևելք։

— „Рѣчь"-ի Պարիզի թղթակիցը հեղինակաւոր աղբիւրից ստացել է հետևեալ բացատրութիւնը։ Անգլօ-ֆրանսիական արտիլերիան գրեթէ ամբողջ ճակատի վրայ կը շարունակի այն դաժան աշխատանքը, որ մուրճը դարկում է գնդանին։ Այդ աշխատանքը կը շարունակւի այնքան, մինչև որ թշնամին կակղի։ Այդ նպատակին կը դիմեն դանդաղ, բայց յամառօրէն և հետզհետէ ուժեղացնելով հարւածի ոյժը։ Յամառ յարձակումներ ճակատի վրայ և հանգիստ աշխատանք թիկունքին— ահա անգլօ-ֆրանսիացիների ծրագիրը։

— «Рус. Вѣд.»-ին Բուխարեստից հեռագրում են, որ կազակներից հետապնդւած աւստրիացիները շարունակում են անցնել ռումինական հողը, ուր և զինաթափ են լինում։ Նկատւում է, որ Բուքովինայում ռուսների ունեցած աջողութեան հետ ուժեղացել է սերբերի փախուստը աւստրիական գերութիւնից։ Փախստականները հաղորդում են, որ աւստրօ-գերմանական բոլոր զօրքերը բալկանեան ճակատից շտապով փոխադրւած են ռուսական ճակատը։ Բուլղարական ամբողջ բանակը կենտրոնացւած է Մակեդոնիայում և պատրաստւում է դիմադրելու դաշնակիցներին։

— Կոպենհագենից հեռագրում են, որ գերմանական թերթերի թղթակիցները հնարաւոր են դըտնում անգլօ-ֆրանսիացիների նոր առաջխաղացումը, բայց դրութիւնը կրիտիքական չեն համարում։

— Բուխարեստի գերմանոֆիլ «Պոլիտիկա» լրագրի ասելով, Համաձայնութեան պետութիւնների ներկայացուցիչները ծանուցել են Բրատիանուին, որ Պարիզի տընտեսական խորհրդաժողովի որոշումների համաձայն, Ռումինիայի հացի նոր բերքի վաճառումը գերմանական բլոկին՝ թշնամութեան ակտ կը նկատւի։

— Բուխարեստից հաղորդում են, որ ռուսաց զօրքերի Տրանսիլւանիա մտնելու լուրը խիստ յուզում է առաջ բերել ռումինական քաղաքական շրջաններում. Նոյն իսկ չէզոքութեան կողմնակիցները խոստովանում են, որ այն դէպքում, երբ ռուսաց զօրքերը մտնեն Հունգարիայի սիրտը, Ռումինիան ստիպւած կը լինի անցնելու դաշնակիցների կողմը։

— Աթէնքից հաղորդում են, որ այնտեղ կազմւում է զինւորական մի նոր միութիւն գերմանոֆիլ քաղաքականութիւնը պաշտպանելու համար։ Միութեան պարագլուխն է գեներալ Մակրիս։ Միութիւնը առ այժմ մտադիր չէ ուժով արգելք լինելու Վենիզելոսի նորից կառավարութեան գլուխն անցնելուն, այլ ուզում է բողոքներ կազմակերպել դաշնակիցների դէմ։

Խմբագիր՝ Ս. ՍԱՀԱԿԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ազգականներիս և ծանօթներիս՝ Փիլիպպոս Օսկեան Փիլիպպոսեանց— Սեբաստացի, որ գտնւում է Նիւ-Եորքում, յայտնում եմ, որ ես ողջ-առողջ գտնւում եմ Սուխումում. Հասցէս — Сухумъ. Книжн. магаз. „Прометей", յանձնել Մելքոն Փիլիպպոսեանցին։ 876 3—1

Հրատարակութիւն «Հորիզոն» Ընկ.

Типографія „МАМУЛЪ". Лорис-Меликовская №. 9